Ք.Երևան 06.10.2025թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿ Կարգապահական հանձնաժողով

Արման Տոնոյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ ,,ՍԳԿԿ,, ԻԿ-ի տնօրեն՝ Անդրանիկ Ելինյանի դիմումի, /այսուհետ՝ դիմումատու/ սնանկության գործով կառավարիչ՝ Արման Տոնոյանի /այսուհետ՝ կառավարիչ/ նկատմամբ, կարգապահական վարույթ հարուցելու և նրա նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին պարզեց, դիմումատուի կողմից դիմում է ուղարկվել ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանի անվամբ, որի սկանավորված տարբերակը Ա.Սարգսյանի կողմից էլ.փոստի միջոցով ուղարկվել է ինչպես հանձնաժողովի անդամներին, այնպես էլ կառավարչին:Նշված բողոքը հանձնաժողովին տրամադրելուց հետո, հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի ,,3,,-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարչի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, 2025թ.-ի հունիսի 06-ին և 2025թ.-ի սեպտեմբերի 6-ին նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Նախ հարկ է նշել, որ 2025թ.-ի հունիսի 6-ին նշանակված նիստը հետաձգվել է դիմումատուի դիմումի հիման վրա, որով վերջինս հանձնաժողովին հայտնել է, որ դիմումում նշված իր՝ 190000 ՀՀ դրամի չափով պարտավորությունից, իր կողմից մարվել է 100000 ՀՀ դրամ գումարը /վճարման անդորագիրը կցվել է/:Նշված դիմումով կառավարիչը խնդրել է նաև նիստը հետաձգել երեք ամիս ժամկետով, մնացած գումարը վճարելու նպատակով:Հանձնաժողովը քննության առնելով ներկայացված դիմումը եկավ այն եզրակացության, որ նշված դիմումը ենթակա է բավարարման և նիստը հետաձգեց մինչև 06.09.2025թ.:

Իսկ 2025թ.-ի սեպտեմբերի 5-ին նշանակված նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը: Ինչ վերաբերվում է դիմումատուին և կառավարչին ապա վերջիններս նիստին պատշաճ ծանուցված լինելով հանդերձ չէին ներկայացել:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը հայտնեց, որ ինչպես արդեն հայտնի է հանձնաժողովի անդամներին, կառավարչի կողմից նախորդ նիստին ներկայացվել էր դիմում, որով նա խնդրել էր հետաձգել նիստը դիմումում նշված գումարը վճարելու նպատակով, որը կառավարիչ՝ Արման Տոնոյանի կողմից կատարվել է և հանձնաժողովի անդամներին խնդրեց հայտնել կարծիք հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հաշվիառնելով այն հանգամանքը, որ կառավարիչի կողմից իր պարտականությունները կատարված են, ուստի նա գտնում է, որ վարույթը ենթակա է կարճման:

Հանձնաժողովի անդամ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ նա նույն կարծիքին է և գտնում է, որ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Հանձնաժողովի անդամ՝ նախագահող Արման Սարգսյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կառավարիչի կողմից վարույթի ընթացքում խախտումը վերացվել է ուստի հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները, որոշեց Արման Տոնոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան